ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ
« » հոկտեմբերի 2025թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լևոն Գագիկի Ալոյանի՝ «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման հեռանկարները դատաիրավական բարեփոխումների համատեքստում. տեսական-իրավական վերլուծություն» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Լևոն Գագիկի Ալոյանի «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման հեռանկարները դատաիրավական բարեփոխումների համատեքստում. տեսական-իրավական վերլուծություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի նիստում (27.10.2025թ., արձանագրություն թիվ 3), մասնակցությամբ՝ ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանի, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Վաղարշյանի, ի.գ.թ. դոցենտ Հ.Մարտիրոսյանի, ի.գ.թ. դոցենտ Կ.Ամիրի, ի.գ.թ. դոցենտ Ս.Քոչարյան, ի.գ.թ. դոցենտ Ռ.Աբաջյանի, ի.գ.թ. դոցենտ Ա.Ասատրյանի, ի.գ.թ. դոցենտ Տ.Սիմոնյանի, ի.գ.թ. դոցենտ Ա.Ալեքսանյանի և նիստի քարտուղար Ա.Սումբատյանի:

Թեման ինքնին արդիական է, քանզի առկա է դատական իշխանության զարգացման հեռանկարների առնչությամբ տեսական հիմքերի անբավարարության համատեքստում ակնկալվող խորքային լուծումներ առաջադրելուն միտված հետազոտության օբյեկտիվ անհրաժեշտությունը: Միաժամանակ, հեղինակի

հիմնավորումների առնչությամբ կան դիտողություններ, որոնք արտացոլված են սույն կարծիքի թերությունների և դիտողությունների հատվածում:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլխից և եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Աշխատանքը, հիմնականում, շարադրված է պարզ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ մտքերից, քերականական կանոնների շեղումներից, սակայն առկա են քերականական և շարահյուսական կանոնների որոշ շեղումներ, ինչին անդրադարձ է արված թերությունների և դիտողությունների հատվածում:

Ատենախոսության ձևավորումը հիմնական գծերով համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև կառուցվածքը և ծավալը:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող բավարար չափով մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, դատական ակտերը, ինչպես նաև տարբեր երկրների փորձը և միջազգային փաստաթղթերը:

Ատենախոսությունում, մեր կարծիքով, խնդրահարույց է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու, ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողությունների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկան բարելավելուն, օրենսդրական ակտերում որոշակի փոփոխություններ կատարելուն ուղղված առաջարկություններ մշակելու անհրաժեշտ ունակությունների հարցը, ինչին ևս անդրադարձ է արված թերությունների և դիտողությունների հատվածում:

Կարծում ենք, ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1.1. Լեզուն և ակադեմիական ոճը

Աշխատանքի ոճը հիմնականում բավարարում է ներկայացվող պահանջներին, միաժամանակ այն անհրաժեշտ չափով ակադեմիական չէ, հատկապես՝ մեծամասամբ առանձնանում է որպես նկարագրական բնույթ ունեցող աշխատանք: Ատենախոսությունում կան անհարկի խրթին, ոչ հստակ ձևակերպումներ, երկիմաստ արտահայտություններ:

1.2. Մեթոդաբանություն և էմպիրիկ տվյալներ

Մեթոդաբանական մոտեցումը բավարար չափով նկարագրված է (պատմական, համեմատական, էմպիրիկ), սակայն էմպիրիկ տվյալներին պակասում են անհրաժեշտ հավաստում ապահովող նյութեր:

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

2.1. Գիտական նորույթի արժեքը

Ատենախոսության գիտական նորույթը գործնական արժեք ներկայացնող հիմնախնդրի ներկայացումը և վերլուծումն է՝ ընդգծելով դրա ճանաչողական, գործնական և տեսական նշանակությունը՝ ամփոփելով այն կոնկրետ եզրահանգմամբ: Պաշտպանության ներկայացված եզրահանգումների, ինչպես նաև «Եզրակացություն» հատվածում արտացոլված դատողությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք մեծամասամբ բավարար չափով չեն համապատասխանում գիտական նորույթի արժեքին ներկայացվող չափանիշներին: Հեղինակի եզրահանգումները, առաջարկությունները և դատողությունները ոչ թե իրավաչափ չեն, այլ մի մասը պարզապես չունի պաշտպանության ներկայացվող հիմադրույթներին բնորոշ անհրաժեշտ որակներ, դրանք հիմնականում՝ բովանդակում են հանրահայտ փաստեր, ուղղակի շարադրված են սեփական խմբագրությամբ:

Այսպես, գիտական նորույթ չեն կարող համարվել հեղինակի կողմից, հատկապես՝ «Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները» հատվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերով արտացոլված հիմնական դրույթները:

Այսպես, 1-ին կետով հավաստվում է, որ. «Դատական իշխանությունը հանրային-պետական իշխանության գործունեության հատուկ տեսակ է, որը կարգավորում է դատական իրավունքի նորմերով, ողջախոհության, արդարության և բանականության կանխադրույթներով և որոնց ծագումն ու գոյությունը

պայմանավորված են տվյալ սոցիումի պատմականորեն ձևավորված առաձնահատկություններով և ավանդույթներով»: Այն, որ դատական իշխանությունը հանրային իշխանության ինքնուրույն տեսակ է, ոչ միայն հանրահայտ է, այլև անմիջականորեն այլ խմբագրությամբ ամրագրված է Սահմանադրությամբ: Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե ողջախոհության, արդարության և բանականության կանխադրույթների ծագումն ու գոյությունը պայմանավորված են տվյալ սոցիումի պատմականորեն ձևավորված առաձնահատկություններով և ավանդույթներով, ևս վիճահարույց չէ, քանզի իրավաքաղաքական մշակույթի տարրերի ծագման ու ձևավորման վրա ազդող գործոնների ամբողջական կառուցվածքը վաղուց է բացահայտված և արտացոլված իրավունքի տեսության բոլոր աղբյուրներում:

2-րդ կետով արտացոլված շարադրանքը բովանդակային կտրվածքով նույնական է վերը նշված 1-ին կետում արտացոլված հիմնական դրույթի հետ:

Կամ 4-րդ կետով ամրագրված է, որ. «Դատավորը՝ որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտ, իր պահվածքով պետք է առաջացնի այնպիսի իրավիճակներ կամ պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել, վնասել դատավորի (դատարանի) անկախությունը, անաչառությունը և հեղինակությունը»: Սա, ըստ էության, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գրեթե բառացի կրկնությունն է.

«1. Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է՝

1) զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց»:

5-րդ կետով ներկայացված հիմնական դրույթը պարզապես վերաբերում է իրավական պետությունում դատական իշխանության անկախության նշանակությանը, ինչը ևս հանրահայտ դրույթ է և այս կամ այն խմբագրությամբ արտացոլված է ինչպես իրավունքի աղբյուրներում, ընդհուպ՝ Սահմանադրությամբ, այնպես էլ հետազոտություններում:

8-րդ կետով արտացոլված հիմնադրույթը ևս հանրահայտ փաստի նկարագրություն է, քանզի դատական իշխանության իրական լինելու որակները, անշուշտ, դրսևորվում են կոնկրետ պրակտիկ գործունեությամբ:

Ինչ վերաբերում է 7-րդ և 9-րդ կետերում արտացոլված հիմնական դրույթներին, ապա դրանք անհարկի վերացական, անորոշ են շարադրված, բավարար խորությամբ չեն բացահայտում գիտական նորույթի էությունը:

2.2. Գիտականություն

Ատենախոսության խոցելի կողմը գիտականությունն է: Ընդ որում, ասվածը վերաբերում է ինչպես ատենախոսության նյութին, այնպես էլ պաշտպանության համար առաջադրված եզրահանգումներին ու առաջարկություններին:

2.3. Գիտականության և գործնականի կապը

Ատենախոսության գիտական արժեքը գիտական նորարարությունների բացահայտման մեջ է, սակայն աշխատանքում օրենսդրական առաջարկների և տեսական գրականության հետ կապը թերի է մշակված, մասնավորապես՝ արտացոլված եզրահանգումները և առաջարկությունները բավարար չափով որոշակի չեն:

2.4. Փաստարկման և հիմնավորման կառուցվածքը

Ատենախոսության կառուցվածքը, ըստ էության, բավարարում է ներկայացվող պահանջներին, ուղղակի աշխատանքում բացահայտված չեն հարցադրումների ընտրության և հերթականության չափանիշները:

2.5. Իրավական վերլուծության խորությունը

Իրավական վերլուծության խորությունը չի բավարարում ներկայացվող պահանջներին, քանի որ այն հիմնականում նկարագրական ուղղվածություն ունի, ինչն էլ թույլ չի տվել անդրադառնալու խորքային իրավական հարցերի համալիր հետազոտությանը: Մասնավորապես, անհրաժեշտ ամբողջականությամբ չեն բացահայտվել դատական իշխանության զարգացման հեռանկարների տեսահրավական հիմքերը, չեն առաջադրվել բավարար գիտականության տեսանկյունից չափով ինքնատիպ չափանիշներ, չեն ուրվագծվել առաջադրված հիմնախնդիրները լուծելու հիմնարար ուղղությունները և այն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ հարկ ենք համարում արձանագրել, որ Լևոն Գագիկի Ալոյանի «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման հեռանկարները դատաիրավական բարեփոխումների համատեքստում. տեսական-իրավական վերլուծություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը, վերը նշված թերություններով հանդերձ, վերապահորեն է միայն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆՈՒՇ ՍՈՒՄԲԱՏՅԱՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ